



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2013թ. Տարբեր 22 - ի թիվ 5/6

ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան ղեկավարութեան (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) եւ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ, ԳՈՒՅՔԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ԱՇՏԱՐԱԿԻ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԹԻՎ 10, ՄԱՍԻՍԻ ԹԻՎ 5, ՍԵՎԱՆԻ Խ. ԱՔՈՎՅԱՆԻ, ՎԱՆԱՉՈՐԻ ԹԻՎ 17, ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 42, ԹԻՎ 45, ՀՐԱՉԴԱՆԻ ԹԻՎ 13, ԵՂԵԳՆԱՉՈՐԻ ԵՎ ԴԻԼԻՋԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐ), ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՅՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՔ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել ՀՀ կրթության և գիտության նախարարությունում «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում ուսումնական հաստատությունների հիմնանորոգման, գույքի և սարքավորումների ձեռք բերման, Հանրակրթական ուսուցման (Աշտարակի, Վաղարշապատի թիվ 10, Մասիսի թիվ 5, Սևանի Խ. Աբովյանի, Վանաձորի թիվ 17, Գյումրու թիվ 42, թիվ 45, Հրազդանի թիվ 13, Եղեգնաձորի և Դիլիջանի ավագ դպրոցներ), համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ ծրագրերի ուղղությամբ ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԲԱՐՅԱՆ



Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊԺ Խորհրդի
2013թ. մարտի 22-ի թիվ 5/6 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ, ԳՈՒՅՔԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ԱՇՏԱՐԱԿԻ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԹԻՎ 10, ՄԱՍԻՍԻ ԹԻՎ 5, ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ, ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 17, ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 42, ԹԻՎ 45, ՀՐԱԶԴԱՆԻ ԹԻՎ 13, ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՎ ԴԻԼԻՋԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐ), ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԿՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2012թ. գործունեության տարեկան ծրագրի 6.5 կետը, ՀՀ վերահսկիչ պալատի Խորհրդի 2012թ. հունվարի 17-ի թիվ 1/3 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության ուսումնասիրություն:

Վերահսկողության առարկան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությանը «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ ծրագրի շրջանակներում ուսումնական հաստատությունների հիմնանորոգում, գույքի և սարքավորումների ձեռքբերում, «Հանրակրթական ուսուցում», «Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ» ծրագրերով ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն,
«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ :

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2012թ. հունվարի 23-ից մինչև 2012թ.
դեկտեմբերի 31-ը:

Վերահսկողության ընդգրկող ժամանակաշրջանը՝ 01.01.2010թ.-ից մինչև ստուգման
իրականացման ժամկետի ավարտը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողությունն իրականացվել է՝
ղիտարկման, ստուգման և վերլուծության ձևերով, ինչպես նաև կիրառվել են
ֆինանսական, արդյունավետության (կատարողական) և համապատասխանության
տեսակները: Կիրառվել է ընտրանքային մեթոդի ոչ վիճակագրական եղանակը:
Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են ղիտարկման և ստուգման
արդյունքում ստացված տվյալները:

Վերահսկողության արդյունքները՝

,Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին
մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈւ) բարեփոխումներն ծրագրի
շրջանակներում ուսումնական հաստատությունների հիմնանորոգում, գույքի և
սարքավորումների ձեռքբերում ծրագրի վերաբերյալ

2010թ. պետական բյուջեով նախատեսվել է 1,632,000.0 հազ. դրամ ,Նախնական
մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և
ուսուցման (ՄԿՈւ) բարեփոխումներն ծրագրի (այսուհետ՝ ՄԿՈԻ ծրագիր)
շրջանակներում ուսումնական հաստատությունների հիմնանորոգման նպատակով:
Դրամարկղային ծախսը կազմել է 1,209,025.0 հազ. դրամ: Հիմնանորոգման
աշխատանքներ են իրականացվել 12 հաստատություններում, որոնցից
ընտրանքային կարգով ստուգվել են 4 հաստատություններում իրականացված
շինարարական աշխատանքների որակը և համապատասխանությունը նախագծային
փաստաթղթերին: Դրանք են՝ Արտաշատի, Եղեգնաձորի պետական քոլեջները,
Արմավիրի գյուղատնտեսական պետական քոլեջը և Թալինի արհեստագործական
ուսումնարանը: Հիմնանորոգման աշխատանքների պայմանագրային արժեքը կազմել

է 468,802.5 հազ. դրամ, որից ստուգման ծավալը կազմել է 134,045.3 հազ. դրամ: Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հետ կնքված պայմանագրերի՝ հիմնանորոգման աշխատանքներն իրականացրել են համապատասխանաբար՝ Շինարար համակարգիչե ՍՊԸ-ն, Հարսնաձորե ՍՊԸ-ն, Ագարակե ԲԲԸ-ն և Տավրիդաե ՍՊԸ-ն: Ստուգված օբյեկտների գերակշիռ մասում կրկնվում են հետևյալ խախտումները՝

- շինարարության վարման մատյանները լրացվել են թերի և սահմանված կարգի խախտումներով:

Բացակայում են՝

- օգտագործված շինարարական նյութերի որակի հավաստագրերը,
- բետոնի փորձարկումների ակտերը,
- տեղադրված խողովակաշարի փորձարկումների ակտերը,
- միջնապատերի և արտաքին պատերի ամրանավորման ակտերը,
- ծածկված աշխատանքների ակտերը կազմվել են թերի, սահմանված կարգի խախտումներով:

Նշված խախտումներից բացի, որոշ օբյեկտներում հայտնաբերվել են այլ բնույթի խախտումներ: Այսպես՝

- ,Արտաշատի պետական քոլեջե ՊՈԱԿ-ի կապիտալ վերանորոգման նախագծի կազմում բացակայում է շինարարության կազմակերպման նախագիծը: Շինարարության ընթացքում անորակ է իրականացվել պատերի գաջե սվաղը և դահլիճի հատակների հղկման աշխատանքները:
- ,Արմավիրի պետական գյուղատնտեսական քոլեջե ՊՈԱԿ-ի հիմնանորոգման գծագրերը կատարված են թերի, ՀՍ ԳՕՍՏ 21.101-99 պահանջների խախտումով: Բացի այդ որոշ հատվածներում անորակ են կատարվել արհեստական զրանիտե հատակի պատրաստման և աստիճանների երեսպատման աշխատանքները:
- ,Թալինի արհեստագործական ուսումնարանե ՊՈԱԿ-ի հիմնանորոգման գծագրերը կատարված են թերի, ՀՍ ԳՕՍՏ 21.101-99 պահանջների խախտումով, տանիքների գծագրերում բացակայում են երկայնական կտրվածքները, հանգույցների անհրաժեշտ մանրամասները թերի են: Բացի

այդ շինարարության ընթացքում որոշ հատվածներում անորակ են կատարվել նոր շարված պատերի բարձրորակ գաջի սվաղի, շեպությունների, առաստաղի գաջի բարձրորակ սվաղի, պատերի և առաստաղի բարձրորակ լատեքսային ներկման, արհեստական գրանիտե սալերից հատակի պատրաստման, լամինատե հատակի պատրաստման, բակային տարածքի 20x10սմ կտրվածքի բետոնե եզրաքարերի տեղադրման, մետաղական ցանցերի վրա ցեմենտ ավազե սվաղի աշխատանքները:

Վերը նշվածը փաստում է այն, որ շինարարական օբյեկտներում տեխնիկական և հեղինակային հսկողությունը չի իրականացվել սահմանված կարգին համապատասխան, խախտվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.98թ. ,Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման մասին թիվ 44 հրահանգի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.09.98թ. ,Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացման մասին թիվ 143 հրահանգի պահանջները: Ընդհանուր առմամբ հայտնաբերվել են 8,625.8 հազ. դրամի խախտումներ, որից ծավալային հավելագրում՝ 3,631.3 հազ. դրամ (ենթակա է վերականգնման պետական բյուջե) և անորակ աշխատանք՝ 4,994.5 հազ. դրամ (ենթակա է վերականգնման աշխատանքով):

2011թ. պետական բյուջեով ՄԿՈԻ ծրագրի շրջանակներում գույքի և սարքավորումների ձեռք բերման նպատակով ճշտված ծրագրով նախատեսվել է 734,204.8 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 572,828.2 հազ. դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվել է նախարարության ենթակայության 67 հաստատությունների (քոլեջներ և արհեստագործական ուսումնարաններ) ապահովել անհրաժեշտ գույքով, սարքավորումներով, լաբորատորիաներով և կաբինետներով (ցանկը կազմվել է հաստատությունների հայտերի հիման վրա): Այդ նպատակով 11 կազմակերպությունների հետ օրենքով սահմանված կարգով կնքվել են 15 պայմանագրեր: Պայմանագրերի գինը կազմել է 572,828.2 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 572,828.2 հազ. դրամ:

Պայմանագրերով նախատեսված ապրանքները նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից տեխնիկական բնութագրերի և քանակների համապատասխանության վերաբերյալ տրված դրական

եզրակացությունների հիման վրա կազմված և երկկողմանի հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունների ընդունվել են պատվիրատուի կողմից և համաձայն բաշխման ցուցակների մատակարարվել են կազմակերպություններին:

Վերահսկողության ժամանակահատվածում իրականացված ընտրանքային ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հաստատությունների կողմից ստացված ապրանքատեսակներն ու քանակները համապատասխանում են բաշխման ցանկերով նախատեսված անվանացանկին և քանակին:

Ապրանքների պայմանագրային գները համապատասխանում են, և չեն գերազանցել ՀՀ կառավարության 17.06.2011թ.-ի թիվ 917-Ն որոշման թիվ 6 հավելվածով սահմանված միջին գներին:

«Հանրակրթական ուսուցում» ծրագիր

Հանրակրթական ուսուցում ծրագրի շրջանակներում վերահսկողություն է իրականացվել Վաղարշապատի Մ.Խորենացու անվան թիվ 10, Մասիսի թիվ 5, Հրազդանի Հ.Օրբելու անվան թիվ 13, Սևանի Խ.Աբովյանի անվան, Գյումրու թիվ 42, 45, Վանաձորի Մ.Խորենացու անվան թիվ 17, Դիլիջանի և Աշտարակի Ն.Միսակյանի անվան թիվ 5, Եղեգնաձորի ավագ դպրոց ՊՈԱԿ-ներում (այսուհետ՝ ավագ դպրոց)

Վերոնշյալ ավագ դպրոցները մինչև 2010 թվականը գործել են մարզպետարանների ենթակայությամբ: ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի թիվ 575-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ ավագ դպրոցներն անցել են նախարարության ենթակայությանը: Ավագ դպրոցների (վերը նշված) ճշտված պայմանագրերով ֆինանսավորումը 2011թ. կազմել է 698,101.3 հազ. դրամ, 2012թ. պայմանագրերով նախատեսվել է 767,524.6 հազ. դրամ, առ 01.09.2012թ. դրությամբ ֆինանսավորումը կազմել է 486,214.5 հազ. դրամ: Բացի այդ միջոցներից ՀՀ կառավարության 2011թ նոյեմբերի 24-ի 1721-Ն որոշմամբ նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների բնականոն գործընթացը կազմակերպելու նպատակով պահուստային ֆոնդից նախարարությանը հատկացվել է 177,205.9 հազ. դրամ, որից վերը նշված 10 ավագ դպրոցներին նվիրաբերության պայմանագրերով հատկացվել է 19,026.2 հազ. դրամ:

Տասը ավագ դպրոցներից 6-ը՝ Վաղարշապատի Մ.Խորենացու անվան թիվ 10, Մասիսի թիվ 5, Գյումրու թիվ 42, 45, Դիլիջանի և Աշտարակի Ն.Սիսակյանի անվան թիվ 5 ավագ դպրոցները գործում են առանց համապատասխան լիցենզիայի՝ խախտվել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի 9 ենթակետի պահանջը, համաձայն որի տարրական, հիմնական միջնակարգ հանրակրթական ուսուցման աշխատանքների կազմակերպումը լիցենզավորման ենթակա գործունեություն է:

2011-2012թթ. ինն ավագ դպրոցների կողմից (բացառությամբ Մասիսի ավագ դպրոցի) ճշտված միջին տարեկան աշակերտների թիվը 124-ով ավելի նախատեսելու արդյունքում ՀՀ պետական բյուջեից 17,464.0 հազ. դրամ ավելի միջոցներ է հատկացվել:

2011-2012թթ. ընթացքում պետական բյուջեից ավել ստացված միջոցներից չծախսված 11,505.8 հազ. դրամը ենթակա է վերականգնման պետական բյուջե, որից 4,858.3 հազ. դրամը վերահսկողության ընթացքում ավագ դպրոցների կողմից վերականգնվել է, իսկ 6,647.6 հազ. դրամը նախարարության կողմից պակասացվել է համապատասխան ավագ դպրոցների նախահաշիվներից:

«Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ» ծրագիր

2010թ.-ից 2012թ. պետական բյուջեով հաստատված «Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ» ծրագիրն (այսուհետ՝ ծրագիր) իրականացրել է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԿՏԱԿ): ԿՏԱԿ-ին պետական բյուջեով միջոցները նախատեսվել և հատկացվել են բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգման «ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով:

2010թ.-ին ծրագիրն իրականացնելու նպատակով ԿՏԱԿ-ը ներկայացրել է 697,951.3 հազ. դրամի բյուջետային ֆինանսավորման հայտ, որից 482,845.4 հազ. դրամը Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի (այսուհետ՝ ՀԴԻՑ) սպասարկման և ցանցային սարքավորումների պահպանման համար, 149,850.0 հազ. դրամը՝ 300 նոր դպրոցների միացման և ՀԴԻՑ-ում ընդգրկման համար: 2010թ.-ին

նախարարության և ԿՏԱԿ-ի միջև ծրագրի ապահովման նպատակով կնքվել է 697,951.3 հազ. դրամի ֆինանսական աջակցության պայմանագիր: ՀԴԻՑ-ի սպասարկման փաստացի ծախսը կազմել է 457,900.0 հազ. դրամ, իսկ 300 նոր դպրոցների միացման և ՀԴԻՑ-ում ընդգրկման աշխատանքներինը՝ 137,300.7 հազ. դրամ: ԿՏԱԿ-ը վերոնշյալ աշխատանքները նախատեսվածից ցածր գնով ձեռք բերելու արդյունքում մնացած 37,494.7 հազ. դրամ գումարից ձեռք է բերել 21,860.0 հազ. դրամի ցանցային սարքավորումներ և տրանսպորտային միջոց, իսկ մնացած 15,634.0 հազ. դրամը վերաբաշխվել է նախահաշվի այլ հոդվածների վրա: Ընդհանուր առմամբ 2010թ. ԿՏԱԿ-ի կողմից իրականացվել են 97,632.1 հազ. դրամի կապիտալ ծախսեր, որից 75,772.1 հազ. դրամը կազմել է 300 նոր դպրոցների միացման և ՀԴԻՑ-ում ընդգրկման շրջանակներում ձեռք բերված սարքավորումների արժեքը :

2011թ.-ին ծրագիրն իրականացնելու նպատակով ԿՏԱԿ-ը ներկայացրել է 858,008.9 հազ. դրամի բյուջետային ֆինանսավորման հայտ (որն ամբողջությամբ նախատեսվել է պետական բյուջեով), որից 771,752.5 հազ. դրամը ՀԴԻՑ-ի սպասարկման և ցանցային սարքավորումների նորացման համար, այդ թվում ՀԴԻՑ-ին միացված 944 դպրոցների (2010թ.-ին ՀԴԻՑ-ին միացված են եղել 644 դպրոցներ) սպասարկման համար՝ 707,773.4 հազ. դրամ և 256 նոր հաստատությունների սպասարկման համար՝ 63,979.5 հազ. դրամ: Կախված այն հանազամանքից, որ նոր 256 դպրոցները 2011թ. չէին միացվելու ՀԴԻՑ-ին և հետևաբար դրանց սպասարկելու կարիք չէր լինելու, ԿՏԱԿ-ի և նախարարության միջև կնքվել է 794,029.3 հազ. դրամի ֆինանսական աջակցության պայմանագիր կամ բյուջեով նախատեսվածից 63,979.5 հազ. դրամով պակաս: ՀԴԻՑ-ի սպասարկման նպատակով ԿՏԱԿ-ի և սպասարկումն իրականացնող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի գինը 2011թ. փաստացի կազմել է 489,805.0 հազ. դրամ, կամ հայտով նախատեսվածից 217,968.4 հազ. դրամով պակաս, որի հետևանքով ԿՏԱԿ-ի և նախարարության միջև 2011թ. հուլիսի 8-ին կնքվել է համաձայնագիր, որով պայմանագրի գինը նվազեցվել է 116,000.0 հազ. դրամով և կազմել է 678,029.3 հազ. դրամ: Սահմանված կարգով այդ միջոցները (116,000.0 հազ. դրամ) նախարարության կողմից վերաբաշխվել են այլ ծրագրերի վրա, իսկ մնացած 101,968.4 հազ. դրամը (217,968.4-116,000.0) ԿՏԱԿ-ը, նախահաշվում փոփոխություններ և լրացումներ կատարելով, ծախսել է ցանցային սարքավորումների ձեռք բերման և այլ

ուղղություններով: Ընդհանուր առմամբ վերոնշյալ միջոցներից 2011թ. կատարվել է 51,463.6 հազ. դրամի կապիտալ ծախս:

2012թ.-ին ծրագիրն իրականացնելու նպատակով ԿՏԱԿ-ը ներկայացրել է 910,456.8 հազ. դրամի բյուջետային ֆինանսավորման հայտ, որից 721,913.7 հազ. դրամը ՀԴԻՑ-ի սպասարկման և ցանցային սարքավորումների նորացման համար:

Այդ միջոցներից 621,227.5 հազ. դրամը նախատեսվել է ՀԴԻՑ-ին միացված 944, և 100,686.2 հազ. դրամը՝ 2012թ. ՀԴԻՑ-ին նոր միացված 459 դպրոցների 4 ամսվա սպասարկման համար: 2012թ. ծրագրի ապահովման նպատակով ԿՏԱԿ-ի և նախարարության միջև կնքվել է 698,532.0 հազ. դրամի ֆինանսական աջակցության պայմանագիր: Համաձայն ծախսերի սկզբնական նախահաշվի (առանց փոփոխությունների) ՀԴԻՑ-ի սպասարկման համար նախատեսվել է 575,180.9 հազ. դրամ, որից 82,560.5 հազ. դրամը 2012թ. նոր միացված 459 դպրոցների 4 ամսվա սպասարկման համար: ՀԴԻՑ-ի սպասարկման փաստացի ծախսը նախատեսվածից 16,772.5 հազ. դրամով պակաս է կազմել, որով ձեռք են բերվել ցանցային սարքավորումներ (ընդհանուր առմամբ 01.01.2012թ.-01.10.2012թ. ԿՏԱԿ-ի կողմից կատարվել է 21,671.1 հազ. դրամի կապիտալ ծախս), իսկ ՀԴԻՑ-ին նոր միացված 459 դպրոցների սպասարկումը համաձայն սպասարկող կազմակերպության հետ կնքված համաձայնագրի (կնքվել է 2012թ. հոկտեմբերի 15-ին) կազմել է 50,645.4 հազ. դրամ ոչ թե չորս, այլ երկուսուկես ամսվա սպասարկման համար, կամ նախատեսվածից 31,915.0 հազ. դրամով պակաս: Այսինքն 459 դպրոց մեկուկես ամիս չեն սպասարկվել, որի արդյունքում այդ նպատակով նախահաշվով նախատեսված միջոցներից 31,915.1 հազ. դրամը (82,560.5-50,645.4) ենթակա է փոխանցման պետական բյուջե:

Այսպիսով, 2010թ.-ից 2012թ. բյուջետային ֆինանսավորման հայտերում նախատեսվել է «ՀԴԻՑ-ի սպասարկում և ցանցային սարքավորումների նորացում» գործողությունը, որը, սակայն նախահաշիվներով նախատեսվել է առանձնացված («ՀԴԻՑ-ի սպասարկում» և «սարքավորումների ձեռք բերում») այն դեպքում, երբ դրանք համապատասխան բյուջետային ֆինանսավորման հայտերում ներկայացվել են միասնական, որից հստակ չէ, թե արդյոք հայտերում նշված «սարքավորումների նորացում»-ն իրենից ներկայացնում է սարքավորումների ձեռք բերում (կապիտալ ծախս), որի պարագայում հայտերում պետք է առանձնացված նախատեսվելիս անհրաժեշտ հաշվարկներով հիմնավորված միջոցներ: Ընդհանուր առմամբ 2010թ.-ից

2012թ. հոկտեմբերի 1-ը բյուջետային ֆինանսավորման հայտերով նախատեսված «ՀԴԻՑ-ի սպասարկման և ցանցային սարքավորումների նորացման» և փաստացի ՀԴԻՑ-ի սպասարկման համար ծախսված միջոցների տարբերությունը կազմել է 139,463.1 հազ. դրամ, որով ԿՏԱԿ-ի կողմից ձեռք են բերվել 76,473.0 հազ. դրամի ցանցային սարքավորումներ, որոնց համար միջոցները նախահաշիվներում նախատեսվել են առանց դրանց կարիքի հիմնավորումների, իսկ մնացած 62,990.0 հազ. դրամը բաշխվել է նախահաշիվների այլ հոդվածների վրա: Ավելին՝ 2011թ. դեկտեմբերի 16-ին 25,544.6 հազ. դրամի սարքավորումների ձեռք բերման անհրաժեշտություն ընդհանրապես չի եղել: Դրանք 2011թ. չեն տեղադրվել համապատասխան դպրոցներում և հանգույցներում, քանի որ մինչ այդ ձեռք բերված սարքավորումներն ամբողջությամբ բավարար են եղել 2011թ. ընթացքում խափանված սարքավորումների փոխարինման համար:

Ինչպես նշվել է ԿՏԱԿ-ին ֆինանսական միջոցները նախատեսվել և հատկացվել են պետական բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգման «ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով, սակայն փաստացի 2010թ.-ից 2012թ. հոկտեմբերի 1-ը ԿՏԱԿ-ի կողմից (նախահաշիվների բոլոր հոդվածներով) կատարվել են 170,766.8 հազ. դրամի կապիտալ ծախսեր: Խախտվել է ՀՀ ֆինանսների նախարարի 09.01.2007թ. N 5 հրամանով հաստատված «Ընթացիկ ծախսերի դասակարգման կիրառման ցուցումները» N 16 հավելվածի պահանջը, համաձայն որի ընթացիկ դրամաշնորհները տրվում են ընթացիկ ծախսերի և պաշարների ձեռքբերման ֆինանսավորման համար:

Հարկ է նշել, որ 2010-2012թթ. նախարարության և ԿՏԱԿ-ի միջև ծրագրի ապահովման նպատակով ֆինանսական աջակցության պայմանագրերը կնքվել են ՀՀ կառավարության 29.04.2010թ.-ի N 566-Ն որոշմամբ սահմանված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի» օրինակելի ձևին անհամապատասխան: Մասնավորապես չի նշվել պայմանագրի օրինակելի ձևի 2.4.2 կետի դրույթը, ինչպես նաև չեն կազմվել համապատասխան հավելվածներ միջոցառումների բովանդակության, ակնկալվող արդյունքների և դրանց գնահատման չափանիշների և պահանջվող միջոցների վերաբերյալ:

2010 թվականից 2011թ. մայիս ամիսը ՀԴԻՑ-ի սպասարկումն իրականացվել է «Հարմոնիա տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) և ԿՏԱԿ-ի միջև կնված պայմանագրերի հիման վրա: Մասնավորապես 2010թ. ՀԴԻՑ-ի (միացված են եղել 644 դպրոցներ) սպասարկման համար կնքվել է 457,900.0 հազ. դրամի մեկ պայմանագիր, իսկ 2011թ. կնքվել է 2 պայմանագիր և մեկ համաձայնագիր ՀԴԻՑ-ի (միացված են եղել 944 դպրոցներ) 4 ամսվա (2011թ. հունվարից մայիս) սպասարկման համար՝ ընդամենը 183,157.0 հազ. դրամի: Հիմնադրամի կողմից կատարված ծախսերի փաստաթղթային ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերը նշված ժամանակահատվածում հիմնադրամը ստացված միջոցները ծախսել է՝

- կապուղիների վարձակալության և ինտերնետային կապի ծառայության համար՝ 115,228.0 հազ. դրամ (7 կազմակերպություն),
- աշխատավարձ և սոցիալական ապահովագրության վճարներ՝ 126,338.0 հազ. դրամ,
- տարածքների վարձակալության և այլ վարչական ծախսեր՝ 62,883.0 հազ. դրամ,
- ՀԴԻՑ-ի վերջնակետային հանգույցների և կապի հանգույցների սպասարկման ծառայության համար՝ 295,680.0 հազ. դրամ:

Հիմնադրամը, համաձայն պայմանագրի, պետք է վարեր դպրոցների առցանց վիճակում գտնվելու, ինչպես նաև դպրոցների կողմից օգտագործված ինտերնետային կայքերի և տվյալների ծավալների մասին գրանցումների տեղեկատվություն հավաքող համակարգ, որը հնարավորություն կտար մշտապես հետևելու դպրոցների առցանց գտնվելու հանգամանքին և թերությունների առկայության դեպքում դրանք արագ վերացնելու: Վերոնշյալ գործիքները հիմնադրամի կողմից վարվել են, սակայն հիմնադրամի, ինչպես նաև ԿՏԱԿ-ի կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվել դրանց միջոցով դպրոցների ՀԴԻՑ-ից չօգտվելու պատճառների բացահայտման և դրանց վերացման ուղղությամբ:

Այդ են վկայում կենտրոնական հանգույցի դինամիկ շտեմարանի տվյալների ուսումնասիրությունները, համաձայն որի 50 դպրոցներ օգտագործել են 0 մեգաբայթ

ծավալ: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերը նշված դպրոցներից՝

- 38 դպրոցներում կապի որակը եղել է ցածր, որի հետևանքով նրանք նախընտրել են օգտվել այլընտրանքային ինտերնետային կապից,
- 10 դպրոցների տրամադրվել է միայն ինտերնետային կապ, այսինքն կենտրոնական հանգույցի հետ կապը բացակայել է,
- 2 դպրոցներ ՀԴԻՑ-ից չեն օգտվել այլ պատճառներով (վերանորոգում, համակարգչային դասարանի տեղափոխում):

ՀԴԻՑ-ի գործունեության ապահովման նպատակով ԿՏԱԿ-ը 2010-2011թթ. հիմնադրամից ձեռք է բերել 59,701.2 հազ. դրամի ցանցային սարքավորումներ, այդ թվում 2010թ.՝ 13,960.0 հազ. դրամի, 2011թ.՝ 45,741.2 հազ. դրամի: 2010թ. ԿՏԱԿ-ը ձեռք բերված սարքավորումները հանձնել է ՀԴԻՑ-ը սպասարկող կազմակերպությանը՝ հիմնադրամին, որը համաձայն պայմանագրի իրականացրել է դրանց փոխարինումը և ԿՏԱԿ-ին է հանձնել խափանված, փոխարինված սարքավորումները: Վերահսկողության արդյունքում պարզվել է, որ ԿՏԱԿ-ը չի իրականացրել փոխարինման ենթակա սարքավորումների հաշվառում, որից պարզ կդառնար, թե որ դպրոցը և ինչ սարքավորման փոխարինման կարիք ունի և արդյոք փոխարինված սարքերը իր կողմից տրված նոր սարքերն են, և այլն:

Այսպես՝ 2010թ. օգոստոսի 25-ին հիմնադրամից ձեռք բերած նոր սարքավորումները (69 ռադիոկամուրջ և 15 ուղիղ միացման ալեհավաք) ԿՏԱԿ-ը հանձնել է հիմնադրամին 77 դպրոցներում դրանք փոխարինելու նպատակով, սակայն այդ սարքավորումների փոխարինման մասին ԿՏԱԿ-ին դիմել էին միայն 38 դպրոցներ: Այսինքն 39 դպրոցներում 37 հատ ռադիոկամուրջ և 7 հատ ուղիղ միացման ալեհավաք (7,717.0 հազ. դրամ) ԿՏԱԿ-ը հիմնադրամին հանձնարարել է փոխարինել առանց դրա պահանջի մասին տեղեկություն ունենալու: Առանձին դեպքերում նորի փոխարեն տեղադրվել են օգտագործված սարքավորումներ:

2010թ. ԿՏԱԿ-ի կողմից սարքավորումները փոխարինելու վերաբերյալ հիմնադրամին տրված հանձնարարագրում չի նշվել փոխարինման ժամկետ, որի

հետևանքով 77 դպրոցներից 40-ում օգոստոս ամսին տրված սարքավորումները փոխարինվել են նոյեմբեր ամսին:

2011թ. ՀԴԻՑ-ի սպասարկման համար հայտարարված մրցույթին մասնակցել են «Յուքոմ» ՍՊԸ-ն և հիմնադրամը: Կազմակերպությունները կատարել են հետևյալ գնային առաջարկները՝ «Յուքոմ» ՍՊԸ՝ 330,777.0 հազ. դրամ, հիմնադրամ՝ 656,904.0 հազ. դրամ: Մրցույթային հանձնաժողովի որոշմամբ հաղթող է ճանաչվել «Յուքոմ» ՍՊԸ-ն: Հիմնադրամը մրցույթի արդյունքների վերաբերյալ բողոք է ներկայացրել լիազոր մարմին (ՀՀ ֆինանսների նախարարություն):

2011թ. դեկտեմբերի 24-ին լիազոր մարմինը կասեցրել է գնումների գործընթացը՝ բողոքը քննելու նպատակով: Այս ընթացքում ԿՏԱԿ-ը, լիազոր մարմնից համապատասխան թույլտվություն ստանալով, հիմնադրամի հետ կնքել է ՀԴԻՑ-ի 2 ամսվա (2011թ. հունվար և փետրվար) սպասարկման պայմանագիր՝ ամսական 45,789.0 հազ. դրամ արժեքով: 2011թ. հունվարի 24-ին լիազոր մարմինը մերժել է հիմնադրամի կողմից ներկայացրած բողոքը: Հիմնադրամը 2011թ. հունվարի 28-ին նոր բողոք է ներկայացրել լիազոր մարմին, որն ընդունել է բողոքը և 01.02.2011թ. կասեցրել գնումների գործընթացը, այն դեպքում, երբ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ կետի՝ լիազոր մարմնի որոշումը համարվում է վերջնական:

ԿՏԱԿ-ի և հիմնադրամի միջև համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ մասի մարտ ամսվա սպասարկման համար կնքվել է պայմանագիր, որը հետագայում, կողմերի համաձայնությամբ, երկարաձգվել է և հիմադրամն իրականացրել է նաև ապրիլ ամսվա ՀԴԻՑ-ի սպասարկումը: Խախտվել է Գնումների մասին ՀՀ օրենքի պահանջը՝ ապրիլ ամսվա գնումն իրականացվել է առանց գնման որևէ ընթացակարգի:

2011թ. հունվարի 28-ին հիմնադրամի կողմից ներկայացված բողոքը լիազոր մարմնի կողմից մերժվել է 2011թ. մարտի 16-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջով սահմանված ժամկետի (20 օրացուցային օրվա փոխարեն 44 օրացուցային օր հետո) խախտմամբ: Լիազոր մարմնի, ինչպես նաև ԿՏԱԿ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների ապահովման արդյունքում կտնտեսվեր 36,449.0 հազ. դրամ բյուջետային միջոց (մարտ և ապրիլ ամիսների ՀԴԻՑ-ի սպասարկման համար հիմնադրամին վճարվել է

91,578.0 հազ. դրամ, փոխարենը «Յուքոմ» ՍՊԸ-ն այդ ժամանակահատվածում ՀԴԻՑ-ը կարող էր սպասարկել ընդամենը 55,129.0 հազ. դրամով):

Եզրակացություն

1. Ստուգված շինարարական աշխատանքներում արձանագրվել է 8,625.8 հազ. դրամի խախտում, որից ծավալային հավելագրում՝ 3,613.3 հազ. դրամ(ենթակա է վերականգնման պետական բյուջե), անորակ աշխատանք՝ 4,994.5 հազ. դրամ (ենթակա է վերականգնման աշխատանքով): Շինարարական օբյեկտների տեխնիկական և հեղինակային հսկողությունը սահմանված պահանջներին համապատասխան չի իրականացվել: Խախտվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 28.24.1998թ. Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման մասին թիվ 44 հրահանգի և 28.09.1998թ. Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացման մասին թիվ 143 հրահանգի պահանջները:
2. Չի պահպանվել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի 9 ենթակետի պահանջը, տասը ավագ դպրոցներից վեցը գործել են առանց համապատասխան լիցենզիայի:
3. 2011-2012թթ. ընթացքում պետական բյուջեից ինն ավագ դպրոցներին ավել հատկացված միջոցներից չծախսված 11,505.8 հազ. դրամը ենթակա է վերականգնման պետական բյուջե, որից 4,858.3 հազ. դրամը վերահսկողության ընթացքում ավագ դպրոցների կողմից վերականգնվել է, իսկ 6,647.7 հազ. դրամը նախարարության կողմից պակասեցվել է համապատասխան ավագ դպրոցների նախահաշիվներից:
4. 2010-2012թթ. «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԿՏԱԿ) կողմից ներկայացրած բյուջետային ֆինանսավորման հայտերում «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի (այսուհետ՝ ՀԴԻՑ) սպասարկման և ցանցային սարքավորումների նորացման» աշխատանքների համար ի սկզբանե նախատեսվել են ավել միջոցներ, որոնք նախարարության կողմից վերաբաշխվել են այլ ծրագրերի, ինչպես նաև

ուղղվել են ԿՏԱԿ-ի ծախսերի նախահաշվի հոդվածներով նախատեսված միջոցների ավելացմանը (կամ նախատեսվել են նոր հոդվածներ):

5. 2010-2012թթ. ԿՏԱԿ-ի կողմից ներկայացված բյուջետային ֆինանսավորման հայտերով ՀԴԻՑ-ի սպասարկման և ցանցային սարքավորումների նորացման համար միջոցները նախատեսվել են միասնական, սակայն դրանք նախահաշիվներում ներկայացվել և դրանց գնումներն իրականացվել են առանձնացված՝ «ՀԴԻՑ-ի սպասարկում» և «Ցանցային սարքավորումների նորացում» ծախսային հոդվածներով: Վերջինս իրենից ներկայացնում է ՀԴԻՑ-ի համար նոր սարքավորումների ձեռք բերում, այն դեպքում, երբ 2010-2012թթ. պետական բյուջեով միջոցները ԿՏԱԿ-ին նախատեսվել է «Ընթացիկ դրամաշնորհ» տնտեսագիտական հոդվածով, սակայն 2010-2012թթ. ԿՏԱԿ-ի կողմից կատարվել են 170,766.8 հազ. դրամի կապիտալ ծախս: Խախտվել է ՀՀ ֆինանսների նախարարի՝ 09.01.2007թ. N5 հրամանով հաստատված «Ընթացիկ ծախսերի դասակարգման կիրառման ցուցումները» N 16 հավելվածի պահանջը, համաձայն որի ընթացիկ դրամաշնորհները տրվում են ընթացիկ ծախսերի և պաշարների ձեռք բերման ֆինանսավորման համար:
6. 2010թ. ՀԴԻՑ-ի սպասարկման պայմանագրի 5.1 կետով սահմանվել է, որ կատարողին ամեն ամսվա ծառայության մատուցման գինը որոշվում է ելնելով սպասարկված դպրոցների թվաքանակից և մեկ դպրոցի սպասարկման միջին ծախսից, սակայն 2011-2012թթ. պայմանագրերում վերը նշվածը չի նախատեսվել, այլ սահմանվել է ամեն ամսվա վճարման ենթակա գումարի չափ: Այս փոփոխությամբ վերացվել է կատարողի կողմից յուրաքանչյուր դպրոցին ծառայության մատուցման հիմնավորման անհրաժեշտությունը:
7. ՀԴԻՑ-ի սպասարկման պայմանագրերում պատվիրատուի պարտավորությունների և իրավունքների շրջանակներում նախատեսված գործողությունները հնարավորություն են ապահովել հսկողություն իրականացնելու ՀԴԻՑ-ի անխափան և ամբողջական գործունեության, ինչպես նաև կատարողի կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նկատմամբ, որը սակայն պատշաճ չի իրականացվել: Արդյունքում, ՀԴԻՑ-ում ընդգրկված հիսուն դպրոցներ օգտվել են այլընտրանքային կապից: ՀԴԻՑ-ից

չօգտվելու պատճառները չեն ուսումնասիրվել և միջոցներ չեն ձեռնարկվել առկա թերությունները վերացնելու ուղղությամբ:

8. 2011թ. ՀԴԻՑ-ի սպասարկման համար հայտարարված մրցույթի արդյունքների ամփոփումից հետո կատարված գործողությունները լիազոր մարմնի, ինչպես նաև ԿՏԱԿ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իրականացնելու արդյունքում կտնտեսվեր 36,449.0 հազ. դրամ բյուջետային միջոց (մարտ և ապրիլ ամիսների ՀԴԻՑ-ի սպասարկման համար հիմնադրամին վճարվել է 91,578.0 հազ. դրամ, փոխարենը «Յուքոմ» ՍՊԸ-ն այդ ժամանակահատվածում ՀԴԻՑ-ը կարող էր սպասարկել ընդամենը 55,129.0 հազ. դրամով):
9. 2012թ. ՀԴԻՑ-ին նոր միացված 459 դպրոցների 4 ամսվա սպասարկման համար նախատեսվել է 82,560.5 հազ. դրամ: ՀԴԻՑ-ը սպասարկող կազմակերպության («Յուքոմ» ՍՊԸ) հետ կնքված համաձայնագրի համաձայն (կնքվել է 2012թ. հոկտեմբերի 15-ին), սպասարկումն իրականացվելու է երկուսուկես ամիս, որի համար անհրաժեշտ գումարը կազմել է 50,645.4 հազ. դրամ կամ նախատեսվածից 31,915.1 հազ. դրամով պակաս, որը ենթակա է փոխանցման պետական բյուջե:
10. Սարքավորումների գնումն իրականացվել է առանց դրանց կարիքի, քանակի և տեսակի ուսումնասիրության, նախահաշվով նախատեսված, ինչպես նաև նախահաշվի փոփոխության արդյունքում այդ հոդվածին ուղղված միջոցների հաշվին: Այսպես՝ 2011թ. ձեռք է բերվել 45,741.2 հազ. դրամի սարքավորումներ (տարեսկզբին նախահաշվով նախատեսվել է 25,800.0 հազ. դրամ, հետագայում ավելացվել է 18,000.0 հազ. դրամով), որից 20,040.0 հազ. դրամի սարքավորումները 01.01.2012թ. դրությամբ չեն օգտագործվել, քանի որ հանգույցներում և դպրոցներում դրանց փոխարինման կարիքը չի եղել:
11. 2010թ. ԿՏԱԿ-ը չի իրականացրել փոխարինման ենթակա սարքավորումների հաշվառում, ինչպես նաև չի մշակել սարքավորումների փոխարինման գործընթացը կարգավորող ընթացակարգ, որի արդյունքում պարզ կդառնար, թե որ դպրոցը, ինչ սարքավորման փոխարինման կարիք ունի և արդյոք փոխարինված սարքերն իր կողմից տրված նոր սարքերն են, թե ոչ: Արդյունքում, արձանագրվել է ինչպես առանց սարքավորումների

փոխարինման անհրաժեշտության մասին տեղեկատվության (դպրոցի տնօրենի դիմում) կատարողին սարքավորումների տրամադրման, առանձին դեպքերում նաև նորի փոխարեն օգտագործված սարքավորումների տեղադրման փաստեր և այլն:

12. Կատարողի կողմից ԿՏԱԿ-ին հանձնված խափանված սարքավորումների մասնագիտական ուսումնասիրություն չի իրականացվել, պարզելու դրանց պիտանելիությունը և վերանորոգման արդյունքում դրանց հետագա օգտագործման հնարավորությունը:

13. 2010-2012թթ. նախարարության և ԿՏԱԿ-ի միջև պայմանագրերը կնքվել են ՀՀ կառավարության 29.04.2010թ.-ի N 566-Ն որոշմամբ սահմանված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի» օրինակելի ձևի 2.4.2 և 2.4.8. կետերի պահանջներին անհամապատասխան:

Առաջարկություններ

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝

1. Առանձնակի ուշադրություն դարձնել իրականացվող շինարարական աշխատանքների համապատասխանությանը նախագծանախահաշվային փաստաթղթերին:
2. Միջին տարեկան աշակերտների թիվը, շեղումներից բացառելու նպատակով, հիմք ընդունել սեպտեմբերի 1-ի դրությամբ ավագ դպրոցներում հրամանագրված աշակերտների թիվը:
3. Պետական բյուջեի «Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ» ծրագրով ավել միջոցների նախատեսումը բացառելու նպատակով ԿՏԱԿ-ի կողմից ներկայացվող բյուջետային հայտը պատշաճ ուսումնասիրել, պահանջել ծախսերի հիմնավորման մանրամասն հաշվարկներ:

4. Պետական բյուջեում ԿՏԱԿ-ի կողմից սարքավորումների և այլ հիմնական միջոցների ձեռք բերման ծախսերը բյուջետային հայտում նախատեսել «կապիտալ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածով:
5. «Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով ԿՏԱԿ-ի հետ դրամաշնորհի հատկացման պայմանագրերը կնքել համաձայն ՀՀ կառավարության 29.04.2010թ.-ի N 566-Ն որոշմամբ սահմանված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի» օրինակելի ձևին համապատասխան:

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝

1. ՀԴԻՑ-ի ամենամյա սպասարկման համար անհրաժեշտ միջոցները նախատեսել՝ ելնելով օպտիկամալուխային կապի, ինտերնետային ծառայության սակագների, աշխատակիցների թվաքանակի, միջին աշխատավարձի, գործուղման և այլ անհրաժեշտ ծախսերի հիմնավորված հաշվարկների հիման վրա:
2. ՀԴԻՑ-ի սպասարկման համար գնման իրականացման հրավերի պայմանագրի նախագծում (հետագայում նաև պայմանագրերում) նախատեսել դրույթներ՝ համաձայն որի ՀԴԻՑ-ի սպասարկման ամեն ամսվա ծառայության մատուցման գինը պետք է որոշվի՝ ելնելով տվյալ ամսում սպասարկված դպրոցների քանակից, ինչպես նաև դրույթ այն մասին, որ ՀԴԻՑ-ը սպասարկող կազմակերպությունը պետք է ծառայությունը մատուցի ինքնուրույն՝ բացառելով ծառայության մատուցման որոշ կամ հիմնական մասի իրականացման փոխանցումն այլ անձի (կամ անձանց):
3. ՀԴԻՑ-ը սպասարկող կազմակերպության կողմից ամենամյա ներկայացված հաշվետվություններով տվյալների համապատասխանությունը ճշտելու նպատակով կենտրոնական հանգույցի միջոցով պարզել, և արձանագրել, թե որ դպրոցները տվյալ ամսում միացված չեն եղել ՀԴԻՑ-ին:
4. Մշակել համապատասխան գործիքներ, որոնք հնարավորություն կընձեռեն պարբերաբար պարզելու ՀԴԻՑ-ից չօգտվող դպրոցների ցանկը և դրա պատճառները, ինչպես նաև կապահովեն վերահսկողություն իրականացնելու

սպասարկող կազմակերպության պարտավորությունների կատարման նկատմամբ:

5. ՀԴԻՑ-ի սպասարկման ու ցանցային սարքավորումների ձեռք բերման համար բյուջետային ֆինանսավորման հայտով միջոցները նախատեսել առանձնացված:
6. ՀԴԻՑ-ի ցանցային սարքավորումների նորացման համար միջոցներ նախատեսել՝ ելնելով սարքավորումների փոխարինման կարիքի, դրանց պիտանելիության ժամկետի և նախորդ տարիներին խափանված սարքավորումների վիճակագրության ուսումնասիրությունից:
7. Պարբերաբար իրականացնել խափանված սարքավորումների մասնագիտական ուսումնասիրություն՝ պարզելու վերանորոգման արդյունքում դրանց հետագա օգտագործման հնարավորությունը, ինչպես նաև վերանորոգման ոչ ենթակա սարքավորումների դուրս գրման անհրաժեշտությունը:
8. ՀԴԻՑ-ին միացված հաստատություններում սարքավորումների փոխարինման գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով՝
 - իրականացնել սարքավորման փոխարինման կարիք ունեցող հաստատությունների հաշվառում,
 - բացի համապատասխան գույքային համարները նշելուց, սպասարկող կազմակերպությանը տրվող սարքավորումների փոխարինման հանձնարարագրում, ինչպես նաև փոխարինումն հավաստող համապատասխան եռակողմ (հաստատություն, ԿՏԱԿ, սպասարկող կազմակերպություն) հանձնման-ընդունման ակտերում նշել նաև սարքավորման գործարանային համարը,
 - սարքավորումների փոխարինման վերաբերյալ համապատասխան հանձնարարագրերում նշել փոխարինման ժամկետները:

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել՝ արձանագրված խախտումները վերացնելու վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел.: 52 66 02, ֆաքս/факс/ fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N----- "-----2013թ.

Հայաստանի Հանրապետության

Վարչապետի պաշտոնակատար

պրն. Տ. Սարգսյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի
2013 թվականի ապրիլի 4-ի թիվ 02/23.14/4564-13 և ապրիլի 8-ի
թիվ 02/23.14/4720-13 գրություններով տրված
ՀՀ վարչապետի հանձնարարականների

Մեծարգո Վարչապետ.

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2008 թվականի մայիսի 4-ի N 225-Ա որոշումը
տեղեկացնում եմ, որ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի մարտի 22-ի
<<Հայաստանի Հանրապետությանը տրամադրված օտարերկրյա պետությունների և
միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային դրամաշնորհային և ՀՀ
պետական բյուջեի միջոցների հաշվին <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ծրագրերի
իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի կողմից կատարված ծրագրերի
նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ
հաշվետվությունը հաստատելու մասին>> թիվ 5/7, 5/6 և 2013 թվականի մարտի 29-ի
<<Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան

հաշվետվությունը հաստատելու մասին>> թիվ 7/1 որոշումներով հաստատված հաշվետվությունների վերաբերյալ դիտողություններ և առաքելություններ չկան:

Տեղեկացնում եմ նաև, որ վարկային միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով վերոհիշյալ հաշվետվության մեջ բերված առաջարկությունների կատարման վերաբերյալ տեղեկանքը և <<Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի գործունեության արդյունքում արձանագրված խախտումները վերացնելու վերաբերյալ գրավոր տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ վերահսկիչ պալատին համաձայն <<Վերահսկիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի <<զ>> կետի:

Միաժամանակ, վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվության եզրակացության 2-րդ կետի կապակցությամբ, տեղեկացնում եմ, որ վերահսկիչ պալատի ստուգման ժամանակահատվածում հանրակրթական ծրագրերով գործունեության լիցենզիաներ ունեցել են հիշատակված 6 ավագ դպրոցներից 3-ը. Արմավիրի մարզի Վաղարշապատի Մ. Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցը՝ 2010թ. հոկտեմբերի 22-ի 1727-Ա/Ք հրամանով /տարրական, հիմնական, միջնակարգ հանրակրթական ծրագրերով/, Արարատի մարզի Մասիսի թիվ 5 ավագ դպրոցը՝ 2011թ. մայիսի 30-ի 617-Ա/Ք հրամանով /հիմնական, միջնակարգ հանրակրթական ծրագրերով/, Շիրակի մարզի Գյումրու թիվ 45 ավագ դպրոցը՝ 2012թ. դեկտեմբերի 25-ի 1173-Ա/Ք հրամանով /հիմնական, միջնակարգ հանրակրթական ծրագրերով/, իսկ մյուս 3-ը լիցենզիաներ ստացել են <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի և լիցենզավորման կարգի պահանջների համապատասխան ուսումնական տարածքի անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ վկայականը ստանալուց հետո. Աշտարակի Ն.Սիսակյանի անվան թիվ 5 ավագ դպրոցը՝ 2013թ. փետրվարի 8-ի 12-Ա/Ք հրամանով /հիմնական, միջնակարգ հանրակրթական ծրագրերով/, Շիրակի մարզի Գյումրու թիվ 42 և Տաուշի մարզի Դիլիջանի ավագ դպրոցները՝ 2013թ. մարտի 13-ի 190-Ա/Ք հրամանով /հիմնական, միջնակարգ հանրակրթական ծրագրերով/: Այս պահին հիշատակված բոլոր դպրոցները լիցենզավորված են: Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվության ՀՀ ԿԳ նախարարությանը արված առաջարկությունների 4 և 5 կետերի կապակցությամբ տեղեկացնում եմ, որ ԿՏԱԿ-ի կողմից սարքավորումների և այլ հիմնական միջոցների ձեռք բերման ծախսերը 2013 թվականին նախարարության կողմից կատարված միջհոդվածային վերաբաշխման միջոցով նախատեսվել են <<Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին>>

հողվածով և <<Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ>> ծրագրի իրականացման նպատակով ԿՏԱԿ-ի հետ դրամաշնորհի հատկացման պայմանագիրը կնքվել է ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի թիվ 566-Ն որոշմամբ սահմանված օրինակելի ձևին համապատասխան:

Հարգանքով՝



Ա. Աշոտյան
(պաշտոնակատար)